ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԴԱՍ ԻՄ ԿՅԱՆՔՈՒՄ

1994-ի խոր աշունն էր:

Մեր նորանկախ պետությունը ընկղմվել էր տնտեսական դժվարությունների բավիղներում: Զրկանքն ու նեղությունը առանց հրավերի, առանց թակոցի ու թույլտվության ներխուժել էին բոլորիս հարկից ներս ու տանտեր էին դարձել: Մեր արարող, մեր «քարից հաց քամող», աշխատասեր ժողովուրդը ընդամենը վայրկյանների ընթացքում դարձել էր ուզվոր... Ձեռքը պարզելն ու խնդրելը դադարել էին այլևս անվայել դիտվել: Խնդրում-ուզում-թախանձում էինք ազգովին: Մեր կյանքը «հումանիտար օգնության» մի հարատև սպասումի էր վերածվել... Թվում էր երկրային այս գեհենը վերջ չի ունենա...

Այդ տարիներին աշխատում էի ամենապահանջարկված, ամենամեծ տպաքանակ ունեցող թերթերից մեկում: Հիմնական թեմաներիս շարքում սոցիալական հարցերն էին, ժողովրդի ընկերային ծանր վիճակը: Օրական տասնյակ մարդկանց էի հանդիպում՝ խեղված, բեկված ճակատագրով մարդկանց, եւ նրանցից յուրաքանչյուրը համոզված էր, որ իր դեպքը բացառիկ է, լուսաբանման կարոտ: Ու եթե գրվի, եթե կարդան... բայց օրեցօր պակասում էր հրաշքի սպասումը, լավատեսական հույսը: Միամտություն էր այս ճանապարհով օգնություն ակնկալելը: Եւ որոշեցի մեկ-երկու առավել ծանր վիճակում գտնվող ընտանիքների մասին ներկայացնել Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում: Կարոտյալների ընտրության սկզբունքը մեկն էր՝ բազմազավակ ընտանիքներ էին: Չնայած ծայրահեղ դժվար պայմաններին մարդիկ աշխարհ էին բերել լուսավոր ու պայծառ, արեւաշող մանկիկներ...

Ներկայացրեցի այս ընտանիքների վիճակը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին, խնդրեցի օգնել.

-Իսկ ես այդ մասին կգրեմ թերթում,- իմ «կարճ խելքով» առաջիկա կաթողիկոսական ընտրությունների հետ կապված PR-ի ձեռնտու առաջարկություն-ակնարկ էի անում ես:

Հայրապետական թեմի առաջնորդի խոսքը կտրուկ էր.

-Կփորձենք օգնել հնարավորությունների սահմաններում, իսկ գրելու հարկ չկա:

Հնարավորությունների սահմանները բավական էական ու շոշափելի էին այդ ընտանիքների համար: Տաք, տանելի ձմեռը ապահովվեց՝ վառելիքի շնորհիվ: Քահանայի (ցավոք, նրա անունը չեմ մտապահել) հետ միասին այցելեցինք ընտանիք-

ներին, որոնք այնքան էին իրարով անցել, որ հաստատապես չհասկացան էլ, թե որտեղից էր օգնությունը, ով էր օգնողը:

Հետո, շատ ավելի ուշ իհարկե հասկացա Գերաշնորհ Գարեգին Սրբազանի չոր, կտրուկ դիրքորոշման իմաստը: Եւ այն առինքնող էր: Քրիստոնեական ամենազեղեցիկ պատգամներից մեկը՝ օգնիր մերձավորիդ, հաստատապես կորցնում է իր փայլն ու գրավչությունը, երբ ուղեկցվում է ծնծղաների աղմուկով, երբ շեփորվում է, երբեմն ավելի բարձր, քան արված գործն է (իսկ այն տարիներին շատ կային նաեւ այդպիսի աղմկարարներ, եւ նրանց մեծ մասը լավ էր հասկանում, որ մեծ աղմուկ են բարձրացնում... ոչնչից): Անաղմուկ ու առանց ակնկալիքի օգնիր մերձավորին, կարոտյալին, օգնության կարիքը ունեցողին, սա չէ՞ արդյոք Տիրոջ պատվիրանը:

Եւ հետո, սեփական ինքանսիրությունդ շոյելու, լավ արարքդ հանրության սեփականությունը դարձնելու մարմաջը արդյո՞ք չի դիպչում մյուս կողմի հոգու ցավոտ սպիներին: Արդյո՞ք ինքնահաստատման այդ ցցուն փորձերը մեկ ուրիշի արժանապատվության հաշվին չեն արվում...

Ես այս ամենը հասկացա հետո ու ամաչեցի գրելու՝ իմ խեղճ ու կրակ առաջարկից...

Գարեգին Սրբազանը լռությամբ լրագրողական էթիկայի (եւ ինչո՞ւ միայն լրագրողական) կարեւոր ու անմոռանալի դաս տվեց ինձ, որը հետագայում անվերապահորեն ու անկախ իրավիճակներից պահպանեցի սրբորեն՝ երբեք մեկին «տալիքը» մյուսի հաշվին չանել: Յուրաքանչյուրին՝ իրենը: Հիմա այս կարեւոր դասը կիրառում եմ լսարանում՝ ուսանողներիս նկատմամբ եւ նրանց էլ հորդորում եմ. ինքնասիրությունդ մի՛ շոյիր ուրիշի հաշվին:

Բայց այն, ինչ պատմեցի, կատարվել է 94-ի խոր աշնանը, մոտալուտ, սահմռկեցնող ձմռան սպասումի պայմաններում: